
**ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑԱԿԱՆ
ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ԼՈՒԻԶԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Յուրաքանչյուր կենդանի լեզու շարունակ փոփոխվող մի համակարգ է, և լեզվական փոփոխությունները առաջին հերթին արտահայտվում են լեզվի բառապաշարում, որն անընդհատ համալրվում է նոր բառային միավորներով՝ նորաբանություններով: Բառագիտության քննությանը նվիրված աշխատություններում¹, ընդհանուր առմամբ, նորաբանություններ են դիտվում լեզվական այն միավորները (բառեր, դարձվածքներ, արտահայտություններ), որոնք փոխառվում կամ ստեղծվում են լեզվի զարգացման տվյալ փուլում կենսունակ բառակազմական եղանակներով, և որոնց նորաստեղծ լինելը գիտակցվում է խոսողի կողմից:

Բացի բառային նորաբանություններից՝ բառապաշարը համալրվում է նաև նոր բառակապակցություններով, բառակապակցական արժեք ունեցող արտահայտություններով, բաղադրյալ հասարակ ու հատուկ անուններով:

Բառակապակցությունը՝ որպես լեզվական միավոր, լեզվում քննելի է թե՛ շարահյուսական, թե՛ բառագիտական տեսանկյուններից: Շարահյուսական մակարդակում բառակապակցությունը ներկայանում է որպես նախադասության բաղադրիչ, իսկ ձևաբանականում՝ որպես բառապաշարային միավոր՝ բառին բնորոշ հատկանիշներով²: Ըստ այդմ՝ նախադասության անդամների փոխհարաբերությամբ, խոսքի պահանջով պայմանավորված՝ շարահյուսական մակարդակում ձևավորվում են ազատ բառակապակցություններ (այսուհետև՝ ԱԲ), իսկ այն բառակապակցությունները, որոնք գոյություն ունեն խոսքից դուրս՝

¹ Տե՛ս **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, **Է. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, **Մ. Ղազարյան**, Ժամանակակից հայոց լեզուն և ժուներենի դերը նրա հարստացման ու զարգացման մեջ, Եր., 1955, **Ա. Մարգարյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982, **Ա. Մուրվալյան**, Հայոց լեզվի բառային կազմը, Եր., 1955, **Հ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987:

² Այս առումով Դ. Շմելյովը նկատում է. «Ի թիվս խոսքում ի հայտ եկող բառակապակցությունների, որոնք ստեղծվում են լեզվում առկա բառերի բառակազմական ու շարահյուսական կապակցելիության կանոններով, որոշ լեզուներում տարբերակում են այնպիսի բառակապակցություններ, որոնք հարկավոր է ընդգրկել բառային կազմ, քանի որ դրանք լեզվում հենց գոյություն ունեն որպես *ավբողջական անվանողական միավորներ* և բառերի նման ոչ թե կազմվում են, այլ խոսքում վերարտադրվում» (**Шмелев Д. М.** Современный русский язык. Лексика. М., 1977, с. 288):

բառապաշարում, ձևավորում են կայուն բառակապակցությունները (այսուհետև՝ ԿԲ): Այսպիսով՝ ԱԲ-ները շարահյուսության քննության առարկան են, այսինքն՝ շարահյուսական միավորներ են, իսկ ԿԲ-ները առավելապես քննվում են բառագիտության մեջ:

Ըստ բաղադրիչների քանակի՝ ինչպես ԱԲ-ները, այնպես էլ ԿԲ-ները առավելապես երկանդամ (երկբաղադրիչ) են, չնայած ԿԲ-ների մեջ սակավադեպ չեն նաև բազմանդամ (բազմաբաղադրիչ) կազմավորումները:

Բաղադրիչների լրացական կապի տեսանկյունից ԱԲ-ների բաղադրիչները կարող են ընդմիջվել նոր լրացումներով, իսկ ԿԲ-ներինը՝ առավելապես ոչ (հմմտ. *բանիմաց գործող նախագահ*, բայց ոչ՝ *գործող բանիմաց նախագահ*)³:

ԿԲ-ների մեջ կարելի է առանձնացնել՝ ա) բաղադրյալ անվանումներ, բ) դարձվածային արտահայտություններ (նաև դարձվածքներ):

Այստեղ կամենում ենք կայուն բառակապակցություններից քննել միայն բաղադրյալ անվանումներն ու դարձվածային արտահայտությունները, որոնք, մեր կարծիքով, առավել հետաքրքրական են բառապաշարի մերօրյա զարգացումներում: Ինչ վերաբերում է դարձվածքներին, ապա դրանք առավելապես խոսակցական կամ ժարգոնային շերտի տարրեր են (հմմտ. *գլուխ արդուկել, գործ տվող, գրդոն անել, վիզ դնել, տանիք ունենալ, տոկոսի տակ գցել, տոկոսի տակ մնալ, փող գցող* և այլն), որոնք իմաստային առումով բավականին հազեցած ու արտահայտիչ են:

1. Բաղադրյալ անվանումներ

Հարկ է նշել, որ «բաղադրյալ անվանումներ» (այսուհետև՝ ԲԱ) երեվույթը տեսականորեն գնահատվել և հայագիտության մեջ սկսել է շրջանառվել խորհրդային տարիներին՝ 50-ականներից: Ի սկզբանե երևույթի վերաբերյալ դիտարկումները տարբեր են եղել⁴: Տեսակետնե-

³ Այս առիթով ուշագրավ դիտարկում ունի Պ. Բեդիրյանը. «Սա նշանակում է, որ նախադասության մեջ ԱԲ-ների բաղադրիչների անմիջական կազմիչների հեռակա կապը (дистанционная связь) համեմատաբար հեշտությամբ է ընկալվում...մինչդեռ ԿԲ-ների բաղադրիչների իրարից հեռանալու դեպքում այդ կապը կարող է չընկալվել, որ մեծ մասամբ հասցնում է դրանց (ԿԲ-ների) քայքայման...» (Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Եր., 1990, էջ 4):

⁴ Հայագիտության մեջ բաղադրյալ անվանումների (այսուհետև՝ ԲԱ) խնդրին անդրադարձել են **Ա. Մուրվալյանը** (հմմտ. «Հայոց լեզվի բառային կազմը», Եր., 1955, էջ 162-194), **Ա. Մուքիսայանը** (հմմտ. «Հոմանիշները ժամանակակից հայերենում», Եր., 1971, էջ 250-251), **Ե. Վևորգյանը** (հմմտ. «Հայերենի դարձվածքները», Եր., 1969, էջ 12), որոնք, մասամբ որդեգրելով Շ. Բալիի և Վ. Վինոգրադովի կողմից առաջադրված մոտեցումները, բաղադրյալ անվանումները դասել են «դարձվածային արտահայտություններ»-ի (фразеологические выражения) շարքը՝ դրանք համարելով նրանց մի տարատեսակը: Ընդ որում՝ տերմինն առաջինը գործածել է Պ. Բեդիրյանը՝ նախ «բաղադրյալ (հասարակ) անուն» (հմմտ. Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանու-

րի տարբերությունը առաջ է եկել կայուն բառակապակցության ներսում բաղադրիչների իմաստային, կառուցվածքային ու գործառնության հատկանիշների ոչ միասնական հաշվառման հետևանքով: ԲԱ-ների (այդպես էլ դարձվածային արտահայտությունների) համակողմանի քննությանը նվիրված նշված աշխատությունում Պ. Բեդիրյանը այսպես է այն սահմանում. «Բաղադրյալ անվանումը կայուն, չվերաիմաստավորված, անվանողական դեր կատարող բառակապակցություն է»: Առավելապես ԲԱ-ն հանդես է գալիս գոյականի խոսքիմասային արժեքով (հմմտ. *ընտանի կենդանի, լայն սպառման ապրանքներ*), երբեմն նաև՝ ածականի (հմմտ. *առաջին կարգի, վերին աստիճանի*), մակբայի (հմմտ. *այսօրվա դրությամբ, ի լուր ամենքի*):

Կիրառական առումով ԲԱ-ները գործածվել են հայերենի զարգացման բոլոր փուլերում, սակայն ԲԱ-ների զգալի աճ նկատվում է խորհրդային շրջանում, ինչին անշուշտ նպաստում էր գիտության, տեխնիկայի մշտական աճը՝ պահանջելով առարկայականորեն անվանել այս կամ այն «բաղադրյալ» հասկացությունը: Դրանք, ի սկզբանե, առավելապես տերմիններ են՝ բաղադրյալ տերմիններ՝ հիմնականում երկբաղադրիչ (հմմտ. *արժեթղթերի շուկա*), նաև եռաբաղադրիչ (հմմտ. *տեղական ինքնակառավարման մարմին*)՝ բաղադրիչների գերադաս-ստորադաս հարաբերությամբ: Վերջիններում գործում է «աստիճանական ստորադասության հարաբերությունը» (Պ. Բեդիրյան, նշվ. աշխ.) (հմմտ. Տեղական < ինքնակառավարման < մարմին). այնուհանդերձ եռաբաղադրիչներում բաղադրիչները կապակցվում են երկանդամորեն (հմմտ. տեղական < մարմին և ինքնակառավարման < մարմին): ԲԱ-ներում հանդիպում են նաև չորս և ավելի բաղադրիչներով (բազմաբաղադրիչ) կազմություններ (հմմտ. *կյանքի համար վտանգավոր մարմնական վնասվածք*):

Ուշագրավ է, որ ինչպես հայ, այնպես էլ օտարազգի դարձվածաբանները չեն ընդունում կաղապարման հնարավորությունը այս ոլորտում: Հերքելով այս պնդումը՝ Պ. Բեդիրյանը համոզիչ կերպով ապացուցում է, որ կաղապարման մեթոդը կիրառելի է «գոնե հայերենի օրինակներով»⁵ ինչպես դարձվածքների ու դարձվածային արտահայտությունների, այնպես էլ բաղադրյալ անվանումների համար: ԲԱ-ների ո-

թյուն, Եր., 1973, էջ 27), այնուհետև «բաղադրյալ անվանում» (հմմտ. Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները): ԲԱ-ների օրինակներ հանդիպում են Վ. Քոսյանի՝ արևելահայ աշխարհաբարի, գրաբարի, միջին հայերենի ու արևմտահայերենի ազատ բառակապակցություններին նվիրված մենագրությունում (տե՛ս Վ. Քոսյան, Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում, Եր., 1990):

⁵ Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, էջ 12-13, 43-44, նույնի՝ Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, էջ 31-33:

րոշ տեսակների մեջ, որը հեղինակը պայմանականորեն անվանում է «շրջասական ԲԱ-ներ», նա, այնուամենայնիվ, առանձնացրել է մի քանի կաղապարներ, որոնք առավելապես պատճենյալ կազմություններ են (հմմտ. *արքա* բառով - ա) «արևմտյան աշխարհի արդյունաբերական խոշորագույն մագնատ՝ *ավտոմոբիլային արքա, նավթի* ~*, *պողպատի* ~, բ) «մի ոլորտի խոշորագույն ներկայացուցիչ»՝ *վալսերի արքա, ֆուտբոլի* ~, գ) «բնության ուժեղագույն կամ գեղեցկագույն արարած»՝ *գազանների/կենդանիների արքա, թռչունների* ~, *լեռների* ~, դ) «(աշխարհի) չեմպիոն»՝ *շախմատի արքա*):

Գործառությանին առումով ԲԱ-ների համար կարելի է առանձնացնել մի կարևոր հատկանիշ ևս՝ վերախմաստավորված, այն է՝ դարձվածքի (իդիոմի) արժեքով դրսևորվելը: Մա ենթադրում է խոսքային միջավայրում ԲԱ-ի ապատերմինացումը, բառային համանունության ստեղծումը. օրինակ՝ հմմտ. *ծանրության կենտրոն* արտահայտությունը ֆիզիկայի տերմին է, սակայն խոսքի մեջ այն կորցնում է իր տերմինային արժեքը և հանդես գալիս որպես փոխաբերական իմաստով խոսքին պատկերավորություն հաղորդող միջոց, թեև տերմինային իմաստի հետ առնչությունը նկատելի է, ինչպես՝ *...Ուժերի հարաբերակցության ծանրության կենտրոնը ԱՄՆ-ից փոխադրվեց Ռուսաստան (Հեռ.):*

Ինչ վերաբերում է ԲԱ-ների ածանցելիությանը, ապա հարկ է նշել, որ հայերենի զարգացման բոլոր վիճակներում էլ, նաև վերջին տասնամյակներում հատկապես ԲԱ-ներից կազմվել ու կազմվում են բաղադրյալ բառեր (հմմտ. *գրանցման մատյան > գրանցամատյան, ընտրական խցիկ > ընտրախցիկ, հաղորդակցության ուղի > հաղորդակցողի, փոխանակային արժեք > փոխարժեք*), այդպես էլ՝ հապավումներ (հմմտ. *արտաքին գործերի նախարար (~ություն) > արտգործնախարար (~ություն), բարձրագույն ուսումնական հաստատություն > բուհ*):

Հասարակարգային փոփոխություններով պայմանավորված՝ վերջին տասնամյակում կյանքի թելադրանքով էապես աճել է նոր հաստատությունները նաև նոր հասկացությունները ԲԱ-ներով արտահայտելու անհրաժեշտությունը: Հարկ է նշել, որ նորաստեղծ ԲԱ-ների համակողմանի ուսումնասիրությանը խոչընդոտում է այն իրողությունը, որ ցայսօր հրապարակի վրա բացակայում է հայերենի թեկուզ որևէ շրջանի կայուն բառակապակցությունների բառարան: Գործը դժվարանում է հատկապես դարձվածքները, դարձվածային արտահայտությունները նոր որակելու պարագայում: Նախ այս լեզվական միավորների որակական «աճի տեմպերը» զգալիորեն զիջում են կայուն բառակապակցությունների մյուս տարատեսակներին, ուստի հաճախ դժվար է լինում հստակ սահմանա-

* Բառակապակցությունների անփոփոխ բաղադրիչը չկրկնելու համար կիրառում ենք պայմանական հետևյալ նշանը ~:

զատել տվյալ միավորի նոր լինելը, եթե նկատի ունենանք, որ վերջին շրջանի դարձվածաբանական բառարաններ շատ քիչ կան⁶:

Նորաստեղծ ԲԱ-ները գոյականի արժեքով, լիակատար կամ մասնակի պատճենմամբ, առավելապես երկբաղադրիչ ու եռաբաղադրիչ կազմավորումներ են, ինչպես՝ *այլընտրանքային զինվորական ծառայություն, անհատ ձեռներեց, առաջին (երկրորդ, երրորդ) ընթերցում, ավելացած արժեքի հարկ, արագ արձագանքման ջոկատ, բանակցային գործընթաց, բարձր տեխնոլոգիա (մոդա, նորաձևություն), բիզնես ծրագիր (կարգ), բնօգտագործման էկոլոգիա, բջջային կապ, բջջային հեռախոս, գործադիր տնօրեն (քարտուղար), գործարար կին (հմմտ. business lady), գործող նախագահ, դիտորդական առաքելություն (պատվիրակություն), դրամի կուրս (փոխարժեք), էլեկտրոնային հասցե (թերթ, փոստ), էկոնոմ կարգ, ընտրական օրենսգիրք, ինքնիշխան երկիր (պետություն), ինֆորմացիոն (տեղեկատվական) տեխնոլոգիաներ, իրավապահ մարմիններ (ջոկատ), լեգիտիմ (օրինական) իշխանություն (նախագահ), խաղաղասպահ ջոկատ, կառուցվածքային բարեփոխում, համամասնական (մեծամասնական) ընտրակարգ, համատեղ ձեռնարկություն, հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն, հետահայաց ցուցադրություն, մամուլի ակումբ, միանվագ օգնություն, միգրանտների (ներգադրյալ) սպասարկման կենտրոն, միջնորդ երկիր (գործընկեր), միջնորդային (բրոքերային) գործունեություն, մշտական հանձնաժողով, մուտքի իրավունքի վավերացում, նախաձեռնող խումբ, նախընտրական քարոզարշավ (պայքար, շտաբ), պայմանագրերի փաթեթ, պայմանագրային զինծառայող, պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգ, պետաիրավական հանձնաժողով, վարկային ծրագիր, վարչական իրավախախտում, վստահված անձ, տեղական ինքնակառավարման մարմին, տնտեսավարման գոտի, տնտեսավարող միավոր (անձ, սուբյեկտ), ուժային կառույց (ներ) (նախարարություն), քաղաքական կոնսուլտացիա և այլն:*

ԲԱ-ներում մեծ թիվ են կազմում ձեռնարկությունների, ֆիրմաների, կազմակերպությունների, կուսակցությունների և այլնի անվանումները, որոնք հաճախ հանդես են գալիս նաև իրենց հապավական համարժեքով, այսինքն՝ հապավումներն իրենք էլ չվերախմաստավորված կայուն բառակապակցություններ են, որոնց բաղադրիչները գրության մեջ ներկայանում են ոչ թե բառային ամբողջական միավորների տեսքով, այլ բաղադրիչների սկզբնատառերի կամ տառերի ու վանկերի միավորումով: Առավել հաճախ գործածվելով պաշտոնական և հրապարակախոսական ոճերում՝ հապավումը՝ որպես բարդության մի տեսակ, նպաստում է տեղ և ժամանակ խնայելուն, նաև օգնում է կրկնութ-

⁶ Տե՛ս **Խ. Բաղիկյան**, Ուսումնական դարձվածաբանական բառարան, Եր., 2002, **Պ. Բեդիրյան**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Եր., 2011:

յուններից խուսափելուն, ինչպես՝ *ազգային անվտանգության ծառայություն (ԱՄԾ), անշարժ գույքի գործակալություն (ԱԳԳ), ավելացած արժեքի հարկ (ԱԱՀ), արտաքին գործերի նախարարություն (ԱԳՆ), եվրոպական խորհուրդ (ԵԽ), զանգվածային լրատվամիջոցներ (ԶԼՄ), ՀայՌուսագազարդ, հետախուզության դաշնային բյուրո (ՀԴԲ), պրոֆեսիոնալ ֆուտբոլ (պրոֆֆուտբոլ), «Սահմանադրական իրավունք» միություն (ՄԻՄ), ԱԺ, ԱՊՀ, ԲՀԿ, ՀՀԿ, ՆԱՏՕ, ՆԳՆ, ՄՊԸ, ՓԲԸ, ՕԵԿ* և այլն: Հանդիպում են նաև բազմաբաղադրիչ կազմություններ, ինչպես՝ *ավտոճանապարհային պատահարների պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ), գնահատման և թեստավորման կենտրոն (ԳԹԿ), կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ), Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակ (ՀԲՀԳ), պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ), սոցիալական ապահովագրության պարտադիր վճար* և այլն:

Սակայն նկատենք, որ ցանկացած բաղադրյալ անվանում նպատակահարմար չէ հապավական ձևով ներկայացնելը, որովհետև նորաստեղծ բաղադրյալ անվանումների հապավումը կարող է հասկանալիության առումով դժվարություն հարուցել, ինչպես՝ *Առևտրի համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ), ավտոգազայցման ճնշումային կայան (ԱԳԼՃԿ), արագ արձագանքման ջոկատ (ԱԱՋ), Զարգացման հայկական գործակալություն (ԶՀԳ), կազմակերպված հանցավորության դեմ պայքար (ԿՀԴՊ), Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատ (ՀԱԱՊ), մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ), պետական եկամուտների կոմիտե (ՊԵԿ)* և այլն:

Նորակազմ բառակապակցություններում հանդիպում են ԲԱ<ԴԱ (դարձվածային արտահայտություն) կազմավորումներ, ինչպես՝ *ինֆորմացիոն (տեղեկատվական) տեխնոլոգիաներ<սև տեխնոլոգիաներ, ներդրումային հոսք (դաշտ)<բերել ներդրումային դաշտ, ինչպես նաև՝ ԴԱ < ԲԱ՝ թեժ գիծ // թեժ կետ* պատճենյալ կազմավորման համաբանությամբ (հմմտ.այդ հարցերով կարող եք դիմել մեր թեժ գծին, որ աշխատում է շուրջօրյա...(Հեռ.)), այդպես էլ՝ միայն հոգնակի թվով տեղեկատվական (բարձր) տեխնոլոգիաներ:

ԲԱ-ներում հանդիպում են նաև դիպվածային կազմություններ, ինչպես՝ *երկվորյակ աշտարակներ* (...Նյու Յորքի երկվորյակ աշտարակների փլուզման պատմությունը դեռ արձագանքներ կգտնի կինոյում (Եթեր, 15.03.15)), *վարդերի հեղափոխություն* (...հարևան երկրում վարդերի հեղափոխությամբ ամեն ինչ փոխվեց (Առավոտ, 21.05.15)):

ԲԱ-ի մի յուրատեսակ դրսևորում են կայուն փոխաբերությունները, ինչպես՝ *ազդեցության ոլորտ, աղքատության հաղթահարում, կուտակային կենսաթոշակ, հարկային բեռ, ճանապարհային քարտեզ, սոցիալական աջակցություն, սպառողական զամբյուղ, սովերային տնտե-*

սուրժուն, փաթեթային եղանակ, փափուկ անցումն այլն:

2. Դարձվածային արտահայտություններ

Կայուն բառակապակցությունների համակարգում ԴԱ-ներն ուրույն միավորներ են: Հայագիտության մեջ այս միավորներին տրվել են տարբեր մեկնաբանություններ ու անվանումներ: Այսպես, Ա. Մուրվալյանը դրանք անվանել է «դարձվածային յուրահատուկ արտահայտություններ», Ե. Գևորգյանն ու Ա. Սուքիասյանը՝ «դարձվածային կամ դարձվածաբանական կապակցություններ», Պ. Բեդիրյանը՝ «արտահայտություններ», ավելի ուշ՝ «դարձվածային արտահայտություններ»: Ընդհանուր առմամբ՝ տվյալ լեզվական միավորները դիտվել են իբրև կայուն բառակապակցություններ, որոնք օժտված են ինչպես իդիոմատիկ, այնպես էլ ոչ իդիոմատիկ արժեքով, այսինքն՝ միավորներ, որոնց բաղադրիչների իմաստային ձուլման աստիճանը մեծ չէ, նրանց իմաստային պատճառաբանվածությունը ստուգաբանորեն ըմբռնելի է: Պ. Բեդիրյանը ԴԱ-ների տակ խմբավորել է «չվերաիմաստավորված, մեծ մասամբ բայական այն կայուն բառակապակցությունները, որոնք ներկայացնում են պատրաստի բանաձևումներ» (հմմտ. բայական կապակցություններից՝ *սերտ կապերի մեջ լինել, սպասելիքները գերազանցել*, ոչ բայական կապակցություններից՝ *մի ավելորդ անգամ (ևս), ըոպելի ազդեցության տակ*)⁷:

ԴԱ-ները նոր երևույթ չեն մեր լեզվում: Պ. Բեդիրյանի մոտավոր հաշվումներով Եղիշեի երկում դրանց թիվը 28 է, իսկ Քուչակի մոտ՝ 48: Ըստ հեղինակի՝ ԴԱ-ների «առաջացման ըստ էության մեկ ճանապարհ կա՝ ազատ կապակցությունների, պատկերավոր արտահայտությունների ու բանաձևումների տարածման ու կայունացման ճանապարհը, գործածության հաճախականության շնորհիվ»⁸: Ասվածից կարելի է եզրակացնել, որ դրանք բառապաշարային «լիիրավ» միավորներ են և բառերի նման ունեն իրենց գոյավիճակային բնականոն զարգացումը: Արդի հայերենում ազատ բառակապակցություններից ԴԱ-ներ կերտելու միտումներն զգալի են ինչպես բառապաշարի համագործածական, այնպես էլ նրա մասնավոր ոլորտներում: Ուշագրավ է նաև հեղինակի այն դիտարկումը, որ ԴԱ-ները, լինելով «տարածված-քարացած... հաճախ և շարժունացած կապակցություններ», հաճախադեպ չեն զեղարվեստական խոսքում և առավելապես գործածվում են ընդհանուր խոսակցական ոճում:

Կառուցվածքային տեսակետից ԴԱ-ներն առավելապես երկբա-

⁷ Պ. Բեդիրյանը հանգամանորեն քննել է ԴԱ-ների բնորոշ հատկանիշները՝ դրանք համադրելով ԲԱ-ների ու ոչ փոխաբերական հարադրական բայերի հետ (տե՛ս Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, էջ 45-46):

⁸ Նույն տեղում, էջ 47:

ղաղրիչ են ու եռաբաղաղրիչ, թեև հանդիպում են նաև չորս, հինգ, վեց բաղաղրիչներով ԴԱ-ներ (հմմտ. *ընդհանուր ոչինչ չունենալ մեկի կամ մի բանի հետ, ոչ մի լավ բանի չհասցնել, ով է քեզ (ինձ....) այդ բախտը տվել, փող լվանալ (փողերի լվացում)*) և այլն):

Այսպես, նորաստեղծ ԴԱ-ներ են՝ *անվստահություն հայտնել, թթվածինը կտրել (գրկել նյութական հնարավորությունից, օգնությունից), ժամանակացույց մտցնել, խաղաթղթեր ձեռք բերել (հնարավորություն ստանալ), կանաչ լույս վառել (թույլտվություն, արտոնություն տալ), կոշտ գիծ, հաղթահարել....տոկոսի արգելքը, հանել....սահմանափակումները, հերն անհիծել (վնասել, պատժել), ձեռքը գրպանը տանել, տալ-անցնել (չափն անցնել, կարողանալ մի բան անել), փողերի լվացում, փուլային կարգավորում* և այլն:

Նորակազմ ԴԱ-ներում հանդիպում են նաև դիպվածային, խոսակցական, ժարգոնային կազմություններ, ինչպես՝ *գիծ նայող, գլխին սարքել, թաղի տղաներ, խաղեր տալ* (ինչ-ինչ նպատակով գործունեություն ծավալել), *խաղի մեջ մտնել* (որևէ գործունեության մեջ ներքաշվել), *հայկական հետք, հարց չկա* (դժվարություն չկա, կասկած չկա), *(ինչ-որ մեկի) մարդն է // մարդը լինել* (ինչ-որ մեկի կողմնակիցը, ինչ-որ մեկի դրածոն լինել), *շոկի մեջ ընկնել* (անսպասելի մի բանից հուզվել, խիստ զարմանալ), *չոր փող (հմմտ. твердая валюта), սառը ցնցուղ լինել // սառը ցնցուղ դառնալ* (խանդավառությունը թուլացնել, սառեցնել), *տակ տալ* (սա նաև հարադիր բայ է), *ցցին շարել // ցից հանել* (դատապարտել, մեղադրել, անարգանքի սյունին գամել) և այլն:

Պետք է նկատել, որ նորակազմ բառակապակցական արտահայտությունների մեջ կան այնպիսիները, որոնց բաղաղրիչներից մեկը բառակապակցության կազմում հանդես է գալիս նոր իմաստով, և այդ իմաստափոխությունը նկատելի է միայն կայուն բառակապակցությունների մեջ, այսինքն՝ բառը նոր իմաստ է ստանում միայն որոշակի բառային միջավայրում, ինչպես՝

Այր - նախկինում նշանակել է «տղամարդ», «քաջ». այսօր, բացի այդ իմաստներից՝ *պետական այր, քաղաքական այր* կայուն բառակապակցություններում գործածվում է «պաշտոնյա» իմաստով:

Բարձր (բարձր տեխնոլոգիաներ, ~նորաձևություն, ~մշակույթ) - նոր իմաստն է «գերժամանակակից, շատ առաջադիմական»:

Գործընկեր (գործընկեր երկրներ) - նշանակել է «գործի ընկեր, ընկերակից», նոր իմաստով՝ «տնտեսական, քաղաքական և այլ շահերով կապված երկիր»:

Գործող (գործող նախագահ, գործող վարչապետ) - նոր իմաստով՝ «ներկայում պաշտոնավարող»:

Երկխոսություն (քաղաքական երկխոսություն, մշակութային) - նոր իմաստով՝ «քննարկում, շփում, նաև բանակցություն»:

Զամբյուղ (սպառողական զամբյուղ) - նշանակում է «սպառողի կենսական անհրաժեշտության ապրանքների նվազագույն ամբողջությունը»:

Ընթերցում (առաջին ընթերցում, խորհրդարանական ընթերցում) - նոր իմաստով՝ «քննարկում»: Մրան համարժեք իմաստով այսօր գործածական է նաև նույնպես փոխառյալ **լսում** ձևը (խորհրդարանական լսումներ):

Թափանցիկ (ընտրություններ) - նոր իմաստով նշանակում է «արդար, ազնիվ, չկեղծված»:

Կառուցողական (-ություն) (կառուցողական առաջարկ, ~ծրագիր, ~երկխոսություն, ~հայեցակարգ) - «ընդհանրապես հասարակական, քաղաքական, տնտեսական և այլ ասպարեզներում արդիական առաջադեմ գաղափար, ծրագիր»:

Սպասարկում (-ել) - «պարտքի սպասարկում» բառակապակցության մեջ նշանակում է «պարտքի աստիճանական մարում»:

Ստվերային (-ություն), (ստվերային տնտեսություն, ~եկամուտ, ~գործունեություն) - այսօր նշանակում է «պետական հարկերից խուսանավող տնտեսական, նաև այլ բնույթի՝ քողարկված գործունեություն»:

Փաթեթ (հսկիչ փաթեթ, ծրագրի փաթեթ, բանակցությունների փաթեթ) - այսօր նշանակում է «փոխկապակցված դրույթների, հարցերի և այլնի խումբ»:

Այլ կերպ ասած՝ այս օրինակներում հանդես են գալիս իմաստային նորաբանություններ. փաստորեն, նոր կարող է լինել ոչ միայն բառակապակցությունը՝ որպես կազմություն, այլև նրա կազմի մեջ մտնող բառի իմաստը՝ որպես այդ բառին ոչ հատուկ, փոխաբերական իմաստ:

Այսպիսով, կապված հասարակական-քաղաքական, տնտեսական և այլ տեղաշարժերի հետ՝ լեզվի բառային կազմը համարվում է ոչ միայն բառային նորաբանություններով, այլև նոր բառակապակցություններով, բաղադրյալ անվանումներով, հապավումներով ու դարձվածքներով:

Բանալի բառեր – բառակապակցություն, բաղադրյալ անվանում, դարձվածային միավոր, բառապաշար, նորաբանություն, դիպվածային կազմություն, երկբաղադրյալ կազմություն

ЛУИЗА МЕЛКОНЯН – Модели словосочетаний-неологизмов в современном армянском языке. – Из устойчивых словосочетаний в статье рассматриваются только составные названия и фразеологические выражения. В связи с изменениями общественного строя значительно выросла в последнее десятилетие потребность выразить новые понятия. Новообразованные словосочетания со значением существительного и полным или частичным заимствованием являются преимущественно двух- или трёхкомпонентными. Среди составных названий многие

обозначают предприятия, фирмы, организации, партии и т.д. В системе устойчивых словосочетаний фразеологические обороты единичны. У некоторых новообразованных словосочетаний один из компонентов несёт новый смысл, это видно только в сравнении с устойчивыми словосочетаниями.

Ключевые слова: *словосочетание, составное название, фразеологическая единица, неологизм, двухкомпонентное образование*

LUIZA MELKONYAN – *Collocation Models of Neologisms in Modern Armenian Language.* – From the set collocations, only the compound names and phraseological expressions are considered in the article. In connection with the social structure changes in the last decade the necessity to express new establishments and new concepts with compound names, has considerably increased. The newly-formed collocations with noun value, with full or partial copying, are mostly binary or ternary formations. Among the compound names, there are a large number of names of enterprises, firms, organizations, parties, etc. In the system of set collocations, the phraseological expressions are unique units. Among the newly-formed phraseological expressions casual, colloquial, jargon structures are also found. Among the newly-formed collocational expressions, there are such, one of the components of which appears in the collocation with a new meaning and that meaning change is visible only in set collocations.

Key words – *collocation, compound name, phraseological unit, vocabulary, neologism, casual structure, binary formation*